ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. 51-17-47

N ԴԴ-6-Ա-4973

«05» օգոստոսի 2015թ.
Գործ թիվ ՎԴ/1049/05/15

«ԷԿՈԴԱՐ» բնապահպանական ՀԿ
(ՀՀ, ք. Երևան, Զրվեժ, «Մայակ» թաղ., 27 շ., բն. 39)

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության
(ՀՀ, ք. Երևան, Կառավարական 2 տուն)

ՀՀ գիտության ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության

փորձագիտական հանձնաժողով
(ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան պող. 24)

✓Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանների, Սևակ և Արթուր Մկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՀԿ-ի և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական ՀԿ-ի ներկայացուցիչ Հայկ Ալումյան
(ՀՀ, ք. Երևան, Գ. Լուսավորչի 15/1)

Ուղարկվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.07.2015 թվականի <<Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին>> որոշումը:

ԴԱՏԱՎՈՐ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ
դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/1049/05/15
Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1049/05/15
2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<22>> հուլիսի 2015թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորների Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանների, Սնակ և Արթուր Մկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արթուր Մկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՀԿ-ի և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական ՀԿ-ի (այսուհետ՝ Հայցվորներ) ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Համապատասխանող) և ՀՀ գիտության ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ոչ իրավաչափ ճանաչելու, Նախարարության կողմից

17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը անվավեր ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Հայցվորների ներկայացուցիչ Հայկ Ալումյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Դատարան) ներկայացրած հայցադիմումով Հայցվորները պահանջել են ոչ իրավաչափ ճանաչել Հանձնաժողովի՝ 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը, անվավեր ճանաչել Նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 11.11.2014 թվականի թիվ 188-Ա հրամանը, 12.11.2014 թվականին տրված 26.09.2012 թվականի վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ29/245 թույլտվությունը, 12.11.2014 թվականին կատարված 26.09.2012 թվականի լեռնահատկացման թիվ ԼՎ-245 ակտի փոփոխությունը, «Ընդերքի տեղամասի ընդլայնման և թույլտվության ժամկետի փոփոխության մասին» ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 24.11.2014 թվականի թիվ 286-Ա հրամանը, նշված հրամանի հիման վրա 25.11.2014 թվականին 26.09.2012 թվականի վերաձևակերպված լեռնահատկացման ԼՎ-245 ակտում կատարված փոփոխությունը, ինչպես նաև 29.11.2014 թվականին նույն նախարարի կողմից 26.09.2012 թվականին վերաձևակերպված թիվ ՇԱԹՎ-29/245 թույլտվությունում կատարված փոփոխությունը:

Դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) 09.04.2015 թվականի որոշմամբ Հանձնաժողովի 24.09.2014 թվականին տեղի ունեցած նիստում «ԳԵՈԹԻՄ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մշակված ՀՀ Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը ոչ իրավաչափ ճանաչելու և Նախարարության կողմից 17.10.2014 թվականին տրված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» թիվ ԲՖ-76 փորձագիտական եզրակացությունն անվավեր ճանաչելու պահանջների մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է, իսկ մնացած մասով՝ վերադարձվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.06.2015 թվականի որոշմամբ Հայցվորների ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 09.04.2015 թվականի «Հայցադիմումի մի մասի ընդունումը մերժելու, իսկ մյուս մասը վերադարձնելու վերաբերյալ» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորների ներկայացուցիչը;

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների հիմքով:

Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի պահանջներին:

Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորմամբ.

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ:

Բողոք բերած անձը նշված հիմնավորումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.

Ստորադաս դատարաններն իրենց հետևությունները հիմնել են այն հանգամանքի վրա, որ Հայցվորները վիճարկում են «փորձաքննություն»: Ըստ ստորադաս դատարանների՝ փորձաքննությունը հանդիսանում է ոչ թե վարչական ակտ, այլ՝ ապացույց: Իրենց այդ հետևություններում դատարանները հիմնվել են բացառապես այդ փաստաթղթի վերնագրի վրա՝ առանց հաշվի առնելու դրա բովանդակությունը, ընդունման ընթացակարգերը և հետևանքները:

Բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 12.06.2015 թվականի որոշումը և Դատարանի 09.04.2015 թվականի որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով, վերացնել»:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումը՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերը: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերելու դեպքում վճռաբեկ բողոք բերող անձը վճռաբեկ բողոքում նշում է այն նյութական կամ դատավարական նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկը բավարար չէ դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բերված բողոքը չի պարունակում այն քննության ընդունելու վերաբերյալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ հիմնավորումներ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում ներկայացված հիմնավորումը բավարար չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով բողոքը քննության ընդունելու հետևության հանգելու համար, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ և 172-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՎԴ/1049/05/15 վարչական գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 12.06.2015 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Թեհմինե, Գոհարիկ և Դերենիկ Ենոքյանների, Սնակ և Արթուր Մկրտչյանների, Արմեն Համբարձումյանի, Վանիկ Հովհաննիսյանի, Արամ Հովսեփյանի, Արթուր Մկրտչյանի, Ալեքսան Մնացականյանի, Գագիկ Գրիգորյանի, Նաիրի Ներսիսյանի, «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ՀԿ-ի և «ԷԿՈԴԱՐ» բնապահպանական ՀԿ-ի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Դատավորներ՝ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Մ. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ